| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| «Երևանի թիվ 6 արհ. պետ. ուսումնարան» ՊՈԱԿ | « ԻՔՍՈՐԱ» ՍՊԸ |
| Ք. Երևան Հաււրաթյան 3 | ք. Երևան Ազատության 1/47 |
| ՀՎՀՀ 01202966 | ՀՎՀՀ05016306 |
| Հ/Հ 2474233159740000 ԱՇԻԲ «Մալաթիա» մ/ճ | Հ/Հ24104004775500 Յունիբանկ Կոմիտաս մ/ճ |
| Հ/Հ 2474233159740010 ԱՇԻԲ «Մալաթիա» մ/ճ | |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« 01» « 11 » 2016թ.

Պայմանագրի անվանումը՝ գրենական ապրանքների ձեռք բերում

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 28 » « 10 » 2016թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն՝ ի դեմս «Երևանի h.6 արհ.պետ.ուսումնարան»ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ս. Գրիգորյանի և Կատարողը՝ « ԻՔՍՈՐԱ » ՍՊԸ -ի դեմս տնօրեն՝ Մ.Ավետյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 28.10.2016թ.-ից- 01.11.2016թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| Գրենական ապրանքներ | Համապատասխա նում է հաշիվ ապրանքագրի տվյալներին | նոյեմբեր | 130000 | նոյեմբեր |
| | | | | |
| Ընդամենը | | | 130000 | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| Մ. Ավետյան | |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան <<28>> հոկտեմբերի 2016թ

Երևանի №6 արհեստագործական պետական ուսումնարանը /այսուհետև Պատվիրատու/ ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, մի կողմից, և "ԻՔՍՈՐԱ " ՍՊԸ / այսուհետ Կատարող/ ի դեմս տնօրեն Մ. Ավետյանի, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /գրենական ապրանքների ձեռք բերում 130000 դրամ/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով/ներով/:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N : 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա/ Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ/ Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանարի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**4.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

4.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

4.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**4.3 Կատարողն իրավունք ունի՝**

4.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**4.4 Կատարողը պարտավոր է**

4.4.1 Սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

4.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

4.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**5. Ապրանքի գինը և վճարման կարգը**

5.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝130000(մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ

վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

5.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամականմիջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցովտվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքիդիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամականմիջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

**6. Ապրանքի որակը**

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**7. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

7.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածումնշված ծավալներով և ժամկետներում:

7.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքումԳնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /Հավելված N 4/:

7.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա օրյաժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունմանարձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**8. Կողմերի պատասխանատվությունը**

8.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում էտույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջինից հարյուրերրորդական) տոկոսի չափով:

8.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

8.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

8.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

8.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 10. Այլ պայմաններ

10.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

10.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2016.:Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր նկինքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

10.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

10.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքի ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համարպատասխանատու է Վաճառողը:

10.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումըկատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀայաստանիՀանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համարանհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսովփոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվինախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

10.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

КՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՀ. ՊԵՏ. ՈՒՍ. ՊՈԱԿ | « ԻՔՍՈՐԱ » ՍՊԸ |
| ք. Երևան, Հաարաթյան 3 | ք. Երևան, Ազատության 1/47 |
| ՀՎՀՀ 01202966 | ՀՎՀՀ0501636 |
| Բանկը՝ ԱՇԻԲ Մալաթիա մասնաճյուղ | Բանկը՝ Յունիբանկ « Կոմիտաս » մ/ճ |
| հ/հ 2474233154790000 | հ/հ 21404004775500 |
| Տնօրեն՝ Ս. Գրիգորյան ______________ | Տնօրեն՝ Մ. Ավետյան ______________ |

# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 31 | Հոկտեմբեր | 2016 թ. | Բ | 6055878698 |
| [4] Առաքման ամսաթիվ | | | | |
| 1 | Նոյեմբեր | 2016 թ. | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | 0 | 5 | 0 | 1 | 6 | 3 | 0 | 6 |
| [9] Անվանումը | «ԻՔՍՈՐԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | | | | | | | | |
| [10] Բանկային տվյալները | Յունիբանկ Կոմիտաս մ/ճ | N 24104004775500 | | | | | | | |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՂՁՔ (ՁՈՐԱՓ) 4-րդ փող. 12 | | | | | | | | |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | Ազատության 1/47 | | | | | | | | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | | 0 | 1 | 2 | 0 | 2 | 9 | 6 | 6 |
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ԵՐԵՎԱՆԻ N6ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | | | | | | | | |
| [16] Բանկային տվյալները | ԱՇԻԲ Մալաթիա մ/ճ | N 2474233154790000 | | | | | | | |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ Լենինականի 3 | | | | | | | | |
| [18] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | |
| [19] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | | | | | | | |
| | Լիազորագիր | Համար | | | | | | | |
| | | Ամսաթիվ | | | | | | | |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | | | | | | | | | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | Ք.Երևան, Հասրաթյան 3 | | | | | | | | |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | A4 թուղթ | տուփ | 20 | 2500 | 50000 |
| 2 | Ֆլոմաստեր | տուփ | 1 | 1400 | 1400 |
| 3 | Կավիճ | տուփ | 60 | 350 | 21000 |
| 4 | Ստեպլերի ասեղ | տուփ | 5 | 200 | 1000 |
| 5 | Բացիկ | հատ | 30 | 300 | 9000 |
| 6 | Նոթատետր | հատ | 2 | 2400 | 4800 |
| 7 | Թանաքի բարձիկ | հատ | 3 | 500 | 1500 |
| 8 | Թանաք | հատ | 2 | 700 | 1400 |
| 9 | Գրիչ գնդիկավոր | հատ | 60 | 80 | 4800 |
| 10 | Գրիչ գելային | հատ | 25 | 200 | 5000 |
| 11 | Նկարի շրջանակ | հատ | 10 | 1600 | 16000 |
| 12 | Սեղանի օրացույց | հատ | 2 | 1000 | 2000 |
| 13 | Սոսինձ /մոմենտ/ | հատ | 2 | 500 | 1000 |
| 14 | Սեղմակ/փոքր/ | հատ | 30 | 50 | 1500 |
| 15 | Սեղմակ/միջին/ | հատ | 20 | 80 | 1600 |
| 16 | Սեղմակ/մեծ/ | հատ | 20 | 100 | 2000 |
| 17 | Քանոն | հատ | 10 | 150 | 1500 |
| 18 | Նշումի թուղթ կպչուն | հատ | 10 | 250 | 2500 |
| 19 | Ծրար | հատ | 50 | 40 | 2000 |
| Ընդամենը | | | | | 130000 |

Առաքող՝ AVETYAN MARINE 6314630215
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

31/10/2016 16:43:50